# ՀՈՐԻԶՈՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horiZon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 39 / No. 23 (2001), 12+4+4+4 էջ / $1.75

ՆՈՅԵՄԲԵՐ 6 / 6 NOVEMBRE / 6 NOVEMBER, 2017





## ԱՅՍ ԹԻՒՈՎ


ՆԵՐԴԻՐ՝ Լուսաւորիչի Կանթեղ յաւելուած

Տոքթ. Արսէն Պասմաճեան Քեպէգի սրտաբաններու ընկերակցութեան նախագահ նշանակուած է , էջ 4

Գանատահայ բժիշկը «Գանատայի Անջրպետի գործակալութեան» կը ներկայացնէ նոր գիւտ մը, էջ 4

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԾՐԶԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, էջ 5

Մեր գրաւականը ժողովուրդն է, էջ 6 Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի անդամ, Հայ Դատի կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ, էջ 6


## «Հորիզոն» մասնակցեցաւ Մոնթրէալի քաղաքապետ Տէնի Գոտէրի հրաւիրած մամլոյ ասուլիսին

*Մոնթրէալի քաղաքապետական ընտրութիւններու նախօրեակին, Ուիլիըմ Կրէյ հիւրանոցի ընդունելութեան սրահին մէջ կայացաւ Մոնթրէալի ազգային փոքրամասնութիւններու համար նախատեսուած քաղաքապետ Տէնի Գոտէրի հետ մամլոյ ասուլիսը, որուն հրաւիրուած էր նաեւ «Հորիզոն» շաբաթաթերթի վարիչ-խմբագիր Վահագն Գարագաշեան։ Ներկայ էին արաբ, իտալացի, ռուս, չինացի, յոյն, իրլանտացի, ափրիկեցի, վիեթնամցի, հրեայ եւ հնդիկ համայնքներու ներկայացուցիչները։ Գանատայի երկրորդ մեծագոյն քաղաքը հանդիսացող Մոնթրէալի* 1.75 *միլիոն բնակչութեան* 30%*-ը ազգային փոքրամասնութեանց կը պատկանին։*

*Քաղաքապետ Գոտէր իր զեկոյցին մէջ հաստատեց, որ իր պաշտօնավարութեան քառամեայ շրջանին, Մոնթրէալի տնտեսութիւնը վերելք արձանագրած է, իսկ քաղաքային ենթակառոյցները գիտարուեստի առաջնակարգ միջոցներով*



*օժտելու նախանձախնդրութեամբ՝ կը հանդիսանայ Գանատայի թիւ* 1 *«Խելացի քաղաք»ը* (Smart city)*։ Քաղաքապետը նաեւ կարեւոր նկատեց համայնքներու համարկման գործընթացը, յիշեցնելով, որ Մոնթրէալ ամէնօրեայ դրութեամբ* 280 *ներգաղթող կ՛ընդունի։*

*Ասուլիսի աւարտին տեղի ունեցաւ հարց-պատասխանի բաժին։ Քաղաքապետ Գոտէրի հետ առանձնազրոյցի ընթացքին խմբագիր Վահագն Գարագաշեան յայտնեց, թէ «Հորիզոն»ն ու Մոնթրէալի Հայ Դատի յանձնախումբը կը զօրակցին քաղաքապետին եւ իր խմբակիցներուն։*

## Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ կայացաւ քաղաքապետ Տէնի Գոտէրի մամլոյ ասուլիսը



*Նոյեմբեր 5-ի Քեպէգ նահանգի քաղաքապետական ընտրութիւններու նախօրեակին, Հոկտեմբեր 31-ին Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ կայացաւ Մոնթրէալի քաղաքապետ Տէնի Գոտէրի մամլոյ ասուլիսը, որուն ներկայ գտնուեցան Մոնթրէալի մէջ գործող տարբեր լրատուամիջոցներ։ Քաղաքապետին կ՚ընկերակցէին ընտրապայքարի իր խմբակիցները, որոնց շարքին Յարութ Շիթիլեան։ Մամլոյ ասուլիսի ընթացքին քաղաքապետը ներկայացուց նախընտրական իր ծրագիրը քաղաքի զարգացման վերաբերեալ։ Ասուլիսի աւարտին Տէնի Գոտէր հանդիպում ունեցաւ Մոնթրէալի հայ Դատի յանձնախումբին հետ եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց զօրակցութեան եւ աջակցութեան համար։*

## ՀՕՄ-ը նեցուկ կը կանգնի «ընտանեկան բռնութեան կանխարգիլման» օրինագիծին

*ՀՕՄ-ը յայտարարութեամբ մը ողջունած է այս ամսուան ընթացքին Հայաստանի խորհրդարանին ներկայացուած «Ընտանեկան բռնութեան կանխարգիլման» օրինագիծը՝ յոյժ կարեւոր նկատելով անոր վաւերացումով նման ոճիրներու քրէականացումը։*

*Նման օրինագիծ մը արդէն իսկ ուշացած նկատելով՝ ՀՕՄ-ը կը շեշտէ, որ* 1918*-ի Հայաստանի Հանրապետութենէն ի վեր կիներու իրաւունքներու պաշտպան երկիր մը պէտք է նման քայլերու դիմէր՝ երկիրը սեռային հաւասարութեան առաջնորդելու նպատակով։*

*Յիշեցնելով, որ հայոց պատմութեան ընթացքին կիները յատկանշական դերակատարութիւն ունեցած են՝ ՀՕՄ-ը կը շեշտէ, որ անոնց պաշտպանութեան ապահովումը տարրական քայլ պէտք է ըլլայ ներկայ Հայաստանի Հանրապետութեան մէջ, որպէսզի կիները կարենան ապրիլ բռնարարքէ եւ անարդար վերաբերմունքէ զերծ պայմաններու մէջ՝ ստանձնելով հասարակութեան մէջ իրենց վերապահուած դերակատարութիւնը։*

*Յայտարարութեան աւարտին կոչ կ՚ըլլայ Հայաստանի իշխանութեանց, որ ապահովեն օրինագիծին վաւերացումը՝ շեշտելով, որ կիներու իրաւունքներու պաշտպանութիւնը պէտք է առաջնահերթութեան վերածուի։*

## Լիբանանէն դուրս ինչպէ՞ս կարելի է քուէարկութեան արձանագրուիլ

*Արտերկրի լիբանանահայերը իրենց բնակած վայրերուն մէջ քուէարկելու համար կրնան արձանագրուիլ՝*

*– Հին կամ* Z*նոր անձնաթուղթով։*

*– Հին կամ նոր ինքնագիր քարտով։*

*– Հին կամ նոր ընտանեկան ինքնագիր քարտով։*

*– Հին կամ նոր անցագիրով (փասփոր)։*




Les saveurs de la méditerrannée...
le bon goût du partage !
Suivez-nous !
www.groupeadonis.ca
MARCHÉ
ADONIS

# Կամուրջներ

Հալէպէն դուրս, կամաց-կամաց, ամէն օր սկսաւ մեր մէջ սուզուելու այն ուշացած գիտակցութիւնը, թէ մեր գաղութը էր եւ կը շարունակէ մնալ Սփիւռքի ամէնէն կազմակերպուած, ամէնէն աւելի ոգի ունեցող գաղութը, ոչ միայն երկրին խաղաղ օրերուն, այլ նաեւ, թերեւս զարմանալիօրէն, պատերազմի ընթացքին։

Այս խօսքերը կ՚ըսեմ, որովհետեւ պատերազմի առաջին երեք տարիներուն ես ալ շարունակեցի ապրիլ եւ աշխատիլ Հալէպի մէջ։

Երբեք չէինք մտածեր «դուրս»ին կամ «ներս»ին մասին. մե՛ր քաղաքն էր, գրեթէ հայրենիք էր մեզի համար իր մթնոլորտով, իր ջամբած ոգիով, ապրեցնելու իր թափով։

«Դուրս»ն էր հաւանաբար, որ «ներս»ին մասին մտածել տուաւ։

«Դուրս»ը ըլլալուն դրական գլխաւոր երեւոյթը այն է, որ կ՚անդրադառնաս ունեցածիդ արժէքին. այդ անդրադարձին հետ կու գայ գիտակցութիւնը եւ ունեցածդ գնահատելու հրամայականը։ Զափազանցօրէն գնահատելու, որովհետեւ պատերազմական պայմաններու մէջ կարելի չէ հաւասարակշռութիւն փնտռել. ծայրայեղ պայմաններու մէջ պէտք է դրականը չափազանց կերպով գնահատել։ Այլ կերպով կարելի չէ առօրեան ապրելու հաւասարակշռութիւն ստեղծել։

«Դուրս»ը հայելիի պէս մեր եսը ցոյց տուաւ մեզի։ Ըլլալով կատարելապաշտ, միշտ աւելին պահանջած եմ ինքզինքէս, շրջապատէս, գաղութէս։ Ու յանկարծ տեսայ, որ իրաւունք չունիմ նման պահանջք դնելու, երբ գաղութը իր լաւագոյնը արդէն տուած էր եւ կը շարունակէր տալ։

Պատերազմը եւ անոր ընթացքին ամբողջ գաղութին կեցուածքը՝ իր մեծերէն մինչեւ յետին դպրոցականը, հաստատեց ա՛յն ներուժը, որ ունի հալէպահայ գաղութը։ Աւելի՛ն, գաղութը ունի այնպիսի մարզուած նոր սերունդ մը, որ այսօր կը յուզէ եւ հպարտութեամբ կը լեցնէ զիս։ Օրինակներ տալու կարիք չեմ զգար։ Հալէպէն հասնող լուրերն ու նկարները կը հաստատեն ասիկա։

Իսկ անոնք, որոնք կրցան այպանել, ըսելով՝ թէ «պատերազմին մէջ ինչպէ՞ս կարելի է հարսանիք, հանդէս կամ խրախճանք ընել», կարելի է ըսել՝ հալէպահայ գաղութը կեանքի եռանդով լեցուն է եւ այնքան իմաստուն դարձած է, որ կը հասկնայ թէ իւրաքանչիւր ապրուած օր կրնայ մեր իւրաքանչիւրին վերջին օրը ըլլալ։ Հետեւաբար, ոչ միայն ապրիլ, այլ ապրիլ կազմակերպուած ձեւով, ապրիլ որպէս գաղութ, ապրիլ լաւագոյն ձեւով եւ լաւագոյնը տալով։ Սփիւռքի այլ գաղութներ, խաղաղութեան մէջ իսկ, նման եռանդ եւ կազմակերպուածութիւն դժուար թէ ցուցաբերեն։

Հալէպը իւրայատուկ եղած է մի՛շտ իր ոգիով, մանաւանդ որ կրցած է այդ ոգին վառ պահել եւ փոխանցել յաջորդ սերունդներուն, արդէն աւելի քան հարիւր տարիէ ի վեր։ Պատերազմը չկրցաւ խախտել ատիկա, նսեմացնել հայ ոգիին ջահը։ Այստեղ «հայ» եւ «ոգի» բառերը կը վերադառնան իրենց սկզբնական իմաստներուն, կը թօթափեն նախորդ տասնամեակներու «հնութիւնը» եւ նոր իմաստ կ՚առնեն. կա՞յ այլ գաղութ, որ նման ըլլայ Հալէպի գաղութին, իր եկեղեցիներու, դպրոցներու, երկրորդական վարժարաններու, ակումբներու, միութիւններու եւ այլ կառոյցներու թիւով, աշակերտութեան թիւով, ժողովուրդին եռանդով, երկրին եւ անոր ժողովուրդին հանդէպ ունեցած հաւատքով։ Եւ այս բոլորը՝ պատերազմի ընթացքին աւելի յստակացած, բիւրեղացած։

Հալէպահայը մի՛շտ սիրած է նաեւ հալէպցի արաբը, որ իւրայատուկ տեսակի մարդ էր՝ ազնիւ, հիւրասէր, բարի, եւ որ ամէնէն կարեւորն է՝ հայը գնահատող։ Ափսոս որ այդ տեսակը գրեթէ ջնջուեցաւ քաղաքէն. եւ մարդու ա՛յդ տեսակին անհետացումը մեր կարեւոր կորուստներէն մէկն է՝ մարդկային զոհերէն ետք եւ նիւթական վնասներէն առաջ։

Տակաւին, Հալէպի նախկին խաղաղ կեանքն ու աշխատանքի առիթները կը ստիպեն, որ հալէպահայը կարօտով յիշէ իր օրերը եւ սպասէ անոնց վերադարձին։

Այս բոլորը նկատի առնելով է որ «ներս»ն ու «դուրս»ը կրնան նպաստել իրարու։

Շատեր վերադարձան, շատեր կը մտածեն վերադառնալ, շատեր պիտի չվերադառնա՛ն։ Շատեր պիտի կարդան այս տողերը եւ կրկին այպանեն «լաւատեսութիւնը», որ կայ տողերուն մէջ, մոռցած՝ որ այսօրուան իրենց ապահովութիւնը եկած է երէկի իրենց քաղաքէն, իրենց գաղութէն։

Դժուար պիտի ըլլայ գալիքին մէջ երկխօսութիւն ստեղծել ո՛չ թէ «ներս»ին եւ «դուրս»ին միջեւ, այլ՝ դրսեցի դարձածներուն եւ տեղացի մնացածներուն միջեւ։ Սակայն սպասելի է ասիկա եւ հասկնալի։

Ինչպէս մեր բոլոր գաղութները պատմութեան ընթացքին դիմագրաւած եւ յաղթահարած են բազմաթիւ դժուարութիւններ, Հալէպի գաղութը եւս կը կրէ իրեն բաժին ինկած այս մեծ ցաւը, կը կրէ գաղութին հանդէպ իր անսահման սիրով եւ «անսրբագրելի» լաւատեսութեամբ։

Գիտեմ, որ կարօտը «սրբագրեր» է բոլոր ժխտականները եւ պահեր միայն դրականը։

Այդ դրականին հանդէպ հաւատքով է որ կը շարունակենք, դուրսը ըլլանք թէ ներսը։

ՄԱՐՈՒԹ ԵՐԱՄԵԱՆ


































## Տոքթ. Արսէն Պասմաճեան Քեպէգի սրտաբաններու ընկերակցութեան նախագահ նշանակուած է



*Մոնթրէալահայ բժիշկ Արսէն Պասմաճեան վերջերս ընտրուած է Գանատայի երկրորդ մեծագոյն նահանգը հանդիսացող Քեպէգ նահանգի սրտաբաններու ընկերակցութեան նախագահ: Բջիջային կենսախտաբանութեան մասնագէտ տոքթ. Պասմաճեան հեղինակ է շարք մը բժշկագիտական յօդուածներու եւ* Canadian Journal of Cardiology*-ի խմբագրական կազմին անդամ է:*

*Տոքթ. Պասմաճեան Մոնթրէալահայութեան ծանօթ ազգայիններ Երուանդ եւ Անի Պասմաճեաններու զաւակն է, հօրենական արմատներով այնթապցի, իսկ մօրենական պապենական արմատներով տիգրանակերտցի:*

## Գանատահայ բժիշկը «Գանատայի Անջրպետի գործակալութեան» կը ներկայացնէ նոր գիւտ մը



*Գանատահայ բժիշկ տոքթ. Սարգիս Երէցեան յառաջիկայ ամիս Գանատայի Անջրպետի գործակալութեան»* (Canada Space Agency) *կողմէ հրաւէր ստացած է յատուկ զեկոյցով մը ներկայացնելու գիտական իր նոր իրագործումը, որմով կը դիւրացուի կործանման ենթարկուած օդանաւերու «սեւ տուփ»ը* (Black Box) *արագօրէն գտնելու հարցը: «Սեւ տուփ»ը համակարգչային այն սարքն է որուն մէջ կ՚արձանագրուին օդանաւի մը բոլոր հաղորդակցութիւնները:*

*Միաժամանակ, տոքթ. Երէցեանի մէկ այլ գիւտով հետաքրքրուած է Միացեալ Նահանգներու Հարվըրտ համալսարանի բժշկական բաժանմունքը. Երէցեան աշխարհահռչակ Հարվըրտ համալսարանին յղած է առանց վիրահատութեան սրտի խցանուած երակները բուժելու իր գիւտի նախագիծը, որ բժշկագիտականօրէն կը կոչուի* Intra-arterial therapeutic dissolution of plaques in coronary and peripheral arterial diseases.

*Տոքթ. Երէցեան միջազգային չորս արտօնագրուած* (patent) *գիւտերու հեղինակ է: 2004-ին Գանատայի գիտութեան նախարարութեան կողմէ 30 հազար տոլար դրամաշնորհ ստացած է բժշկագիտութեան բնագաւառէն ներս ուսումնասիրական աշխատանքներ կատարելու համար: Ան անդամ է «Գանատայի վիրահատութեան ընկերակցութեան»:*

*Տոքթ. Երէցեան բազմաթիւ առիթներով իր ներդրումը բերած է օժանդակելու Հայաստանի եւ Արցախի իր հայրենակիցներուն: Ներկայիս «Հայ որբերու օգնութեան ընկերակցութեան» Մոնթրէալի մասնաճիւղի նախագահն է:*

## Միքայէլ Նահապետեան մետալ կը ստանայ Քեպէգի փոխնահանգապետ տիար Ժ. Միշէլ Տոյոնի ձեռամբ



2016*-ին Միքայէլ Նահապետեան արժանացած էր* Harvard Book Price *մրցանակին,* Harvard *համալսարանի Շրջանաւարտից կողմէ: Այս մրցանակին կ՚արժանանայ քոլէճի այն ուսանողը, որ ձեռք կը բերէ գերազանց արդիւնքներ, կ՚ունենայ օրինակելի վարք, ինչպէս նաեւ՝ ընկերային շրջանակէն ներս գնահատելի ընթացք:*

2017*-ին Միքայէլ մետալ կը ստանայ* Lieutenant-Gouverneur du Que´bec, L'honorable J. Michel Doyon*-ի ձեռամբ՝ առ ի գնահատանք ուսումնական իր ձեռքբերումներուն, ինքզինք գերազանցելուն եւ իր ներդրումին՝ որպէս համահիմնադիր եւ նախագահ Մոնթրէալի* Stanislas *քոլէճին մարդամեքենական* (robotique) *ակումբին՝* Stan Robotix*-ին:* Stan Robotix*-ը իր ստեղծման առաջին իսկ օրէն կրցած է մաս կազմել ԱՄՆ-ի Սան Լուիզ նահանգի համաշխարհային մրցոյթին:*

2017*-ին Միքայէլ արժանացած է նաեւ* Aura *մրցանակին, Քեպէգի* Prive's *Քոլէճներու ընկերակցութեան կողմէ, որ կը տրուի այն աշակերտներուն, որոնք բացառիկ հաղորդակցութիւն ունին ընկերային շրջանակին մէջ:*

2017 *Յունիսին Միքայէլ աւարտեց Մոնթրէալի* Stanislas *քոլէճը՝ արժանանալով քննիչ յանձնախումբին գերազանց յիշատակումին, ի պատիւ իր բացառիկ արդիւնքներուն՝ Ֆրանսայի կառավարութեան ֆրանսական պաքալորիայի քննութիւններուն:*

*Ներկայիս Միքայէլ* 18 *տարեկան, կը շարունակէ իր ուսումը* McGill *համալսարանի* Desautels *բաժանմունքէն ներս եւ իր ձեռք բերած գերազանց արդիւնքներուն շնորհիւ արժանացած է կրթանպաստի:*

Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
**www.sourphagop.net**

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 **OMNI 1** կայանէն:

## ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀԱՄԵՐԳ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍԵԱՆԻ



*Շաբաթ* 30 *Սեպտեմբերի* 2017*-ին Լաւալի եւ Մոնթրէալի հայ գաղութը ժամադրուած էր ՇՈՂԻԿ ԹՈՐՈՍԵԱՆԻՆ* SOPRANO*-ի հետ որպէսզի ներկայ գտնուի իր մենահամերգին որ պիտի կատարուէր Լաւալի Պոն Բասդոր Եկեղեցւոյ մէջ:*

*Շողիկ ժամանած էր Գանատա յատուկ հրաւէրով Լաւալի Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ:*

*Զգալի էր ժողովուրդին կարօտը այսպիսի համերգի մը յատկապէս երգչուհին Միջին Արեւելքէն եկող փայլուն աստղ հայորդի մըն էր: Եկեղեցւոյ սրահը լեցուած էր խուռներամ բազմութեամբ, որոնք եկած էին ունկնդրելու հայկական եւ օտար դասական բարձր որակի երգ եւ երաժշտութիւն: Շողիկին կ՚ընկերանար դաշնակահար՝ Խաչատուր Ղազարեանը:*

*Յայտագիրը բաղկացած էր երկու մասերէ՝ առաջին բաժնին մէջ տեղ գրաւած էին Ամէն Հայր Սուրբ, Հաւուն Հաւուն, Նոր Ծաղիկ,* Ave Maria, *Անտունի, Քելէր Ջոլեր, Անուշի Երգը եւ Անուշի Խելագարութեան պատկերը:*

*Իսկ երկրորդ մասը կը պարփակէր հետեւեալները՝* Alleluja, *Հայաստան, Օրօր, Անոր, Վարդ մը Գետինը,* Come Back to Sorrento, *Երեւան:*

*Առաջին հերթին, ուշագրաւ էր բծախնդրութեամբ ընտրութիւնը բոլոր երգերուն, հայկական եւ օտար դասական երաժշտութենէն: Շողիկ վարպետօրէն տիրապետեց յայտագրին բոլոր երգերուն անխտիր միշտ իր ձեռքը պահելով ցանցը: Ձայնային խաղերն ու ելեւէջները հիանալի կերպով մեկնաբանեց փաստելով իր ձայնային կարողութիւնը:*

*Գերազանց էին մեկնաբանութիւնները յատկապէս ուշագրաւ էին՝ Ամէն Հայր Սուրբը, Անտունին, Քելեր Ջոլեր, Անուշն ու Անուշի խելագարութիւնը,* Alleluja*-ն, Օրօրը, վարդ մը գետինը, երեւանը:*

*Ժողովուրդի բուռն փափաքին համաձայնելով Շողիկ յաճախ կրկնեց որոշ երգեր որոնց մեկնաբանութեան մէջ Շողիկը գերազանցած էր ինքզինք:*

*Ելոյթը աւարտեցաւ Սրբազան Հօր Պահպանիչով եւ քաջալերական խօսքերով ուղղուած Շողիկին եւ փափաք յայտնելով կրկնուին այսպիսի ելոյթները որպէսզի յատկապէս ներկայ սերունդը մնայ կապի մէջ իր երաժշտութեան հետ:*

ԱԲԻԿ ԳԱՆՏԻԼԵԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԾՐՋԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
## 10- 21- Սեպտեմբեր



***Շրջապտոյտի առաջին օրը՝ Այց Թեհրանի Ազգային Առաջնորդարան***

Երկուշաբթի, 11 Սեպտեմբերին, Պարսկաստան շրջապտոյտի մասնակիցները առաջին օրը այցելեցին Թեհրանի Ս. Սարգիս Մայր Եկեղեցի, ուր Բաբգէն Արքեպիսկոպոս իր աղօթքներով եւ օրհնութեամբ բարի երթ մաղթեց շրջապտոյտի մասնակիցներուն:

Ապա՝ այցելեցին Ազգային Առաջնորդարան, ուր հիւրընկալուեցան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի կողմէ: Ընդունելութեան ներկայ էին նաեւ Առաջնորդական Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Մակար Եպս. Աշգարեան, Պրն. Ռոբերթ Պէկլարեան՝ Թեմական Խորհուրդի ատենապետ եւ Դիւանապետը՝ Պրն. Սերուժ Օհանեան:

Սեպուհ Արքեպիսկոպոս բարի գալուստ մաղթեց բոլորին եւ ընդհանուր ակնարկ մը կատարեց Իրանի հայութեան կենցաղին եւ ազգային-կրօնական կեանքին մասին: Բաբգէն Արքեպիսկոպոս իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր, գեղեցիկ եւ պատմական ընդունելութեան համար:

Հանդիպման աւարտին մասնակիցները առիթ ունեցան այցելելու Առաջնորդարանի համալիրէն ներս գտնուող Հայոց Ցեղասպանութեան նահատակաց յուշարձանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը բոլոր հիւրերուն նուիրեց Թեհրանի մէջ հրատարակուած Նոր Կտակարանը եւ Իմ աղօթագիրքս:

***Շրջապտոյտի երկրորդ օրը՝ Թեհրանի մէջ***

Երեքշաբթի, 12 Սեպտեմբերին, Պարսկաստան շրջապտոյտի մասնակիցները այցելեցին Թեհրանի նախագահական ամառնային պալատը ու անկէ ետք Թագաւորական գոհարեղէնի Թանգարանը, իսկ երեկոյեան ներկայ գտնուեցան Հայ Մարզա-մշակութային Արարատ Միութեան կեդրոնատեղին՝ 49-րդ համահայկական խաղերու բացման հանդիսութեան արարողութեան:

Աւարտին, Հ.Մ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութիւնը հիւրասիրութեամբ մը պատուեց: Ներկայ էին Թեհրանի եւ Իսֆահանի Առաջնորդները, Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր Դեսպանը, Թեհրանի եւ Հիւսիսային Իրանահայութեան Խորհրդարանի պատգամաւորը եւ ազգային մարմիններու ներկայացուցիչները եւ այլ հիւրեր:

Չորեքշաբթի 13 Սեպտեմբերին, առաւօտեան, խումբի անդամները Բաբգէն Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ մեկնեցան Թաւրիզ:

***Այցելութիւն Ատրպատականի Թեմի Ազգային Առաջնորդարան***

Հինգշաբթի 14 Սեպտեմբերի առաւօտուն, շրջապտոյտի մասնակիցները Թաւրիզի մէջ այցելեցին Ազգային Առաջնորդարան: Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գրիգոր Եպս. Չիֆթճեան, հիւրընկալեց Գանատահայերը:

Սրբազանը պատմական ակնարկ մը կատարեց Թեմին եւ շրջանին մասին եւ իր ուրախութիւնը արտայայտեց իր տեսակին մէջ իւրայատուկ այս այցելութեան համար:

Ազգային Առաջնորդարան այցելութենէն ետք, շրջապտոյտի մասնակիցները ուղեւորուեցան դէպի Քանտովան, որ կը գտնուի Թաւրիզի հարաւը եւ նշանաւոր է իր 700 տարուան պատմութեամբ եւ ժայռային բնութեամբ:

Ուրբաթ, 15 Սեպտեմբերին, ուխտաւորները մեկնեցան դէպի պատմական Ս. Թադէի եւ Ս. Ստեփանոսի Վանքերը:

***Այցելութիւն՝ Ս. Ստեփանոսի եւ Թադէի պատմական Վանքեր***

Ուրբաթ, 15 Սեպտեմբերին, ուխտաւորները ուղեւորուեցան դէպի Ատրպատականի Թեմի տարածքին մէջ գտնուող Ս. Ստեփանոս Նախավկայի անուամբ մկրտուած՝ Ս. Ստեփանոսի Վանքը: Այնտեղ դիմաւորուեցան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գրիգոր Եպս. Չիֆթճեանի կողմէ:

Ուխտաւորները շրջեցան եկեղեցւոյ եւ վանքի շրջակայքը եւ ստացան մանրամասն տեղեկութիւններ: Բաբգէն Արքեպիսկոպոս եւ Գրիգոր Եպիսկոպոս եկեղեցւոյ մէջ աղօթք կատարեցին եւ փառք ու գոհութիւն յայտնեցին Աստուծոյ: Ուխտաւորները յիշատակելի ու աղօթական ներշնչիչ պահեր ունեցան:

Ս.Ստեփանոս Վանքէն շրջապտոյտը շարունակուեցաւ Արաքսի գետի ափով դէպի Ս. Թադէի պատմական Վանքը: Հաւատքի այս ներշնչարանը, մեր ազգային-եկեղեցական գանձերէն հրաշալի կոթող մըն է, ուր կը հանգչին հայ ժողովուրդի առաջին լուսաւորիչ՝ Ս. Թադէոս Առաքեալի աճիւնները:

Ս. Թադէի Վանքի եկեղեցւոյ մէջ Սրբազան Հայրերը աղօթեցին մեր ժողովուրդի հաւատքի ամրացման, աշխարհի խաղաղութեան եւ մեր արդար իրաւունքներու վերատիրացման համար: Անձամբ ականատես դառնալու յուզիչ պահեր էին պատմական այս վանքերը, ուր տակաւին մեր հայրերու հաւատքի դրսեւորումները կը նշմարուէին ժայռերու վրայ խաչերու պատկերներով:

Առաջնորդ Սրբազան Հայրերը փառք տուին Աստուծոյ, որ Վարդանանց հաւատքը եւ ոգին կը շարունակուի մեր ժողովուրդին մէջ:

***Այցելութիւն Սպահան***

Խումբի անդամները Ատրպատականի պատմական վանքերը այցելելէն յետոյ օդանաւով մեկնեցան դէպի Իսֆահան:

Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ մէջ Պատարագ

Կիրակի, 17 Սեպտեմբերին, Խաչվերացի տօնին առիթով, Գանատահայերը ներկայ գտնուեցան Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս Եկեղեցի եւ մասնակցեցան Սուրբ եւ Անմահ Պատարագին:

Պատարագը մատուցեց Հոգեշնորհ Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան, իսկ օրուայ պատգամը փոխանցեց Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան: Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Կէսօրէ ետք, Գանատահայերը այցելեցին Իսֆահանի պատմական հրապարակը իսկ երեկոյեան, ընթրիքի հիւրերը եղան՝ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդին (ազգային վարչութիւն):

***Այցելութիւն Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանք***

Երկուշաբթի, 18 Սեպտեմբերին, Գանատահայերը այցելեցին Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկչեան պատմական վանքը:

Նոր Ջուղան հիմնուած է 1604-1606 թուականներուն: Սուրբ Ամենափրկչեան վանքը կը գտնուի Մեծ Մէյտան թաղամասին մէջ եւ իբրեւ Առաջնորդարան կը համարուի համայնքի հոգեւոր, ազգային, մշակութային ու հասարակական գործունէութեան գլխաւոր կեդրոնը:

Սուրբ Ամենափրկչեան վանքը յարակից կառոյցներով կը ղեկավարուի Սպահանի Հայոց Թեմին միջոցով:

Վանքին մէջ կը գտնուի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին, որ ամբողջապէս զարդարուած է Հին եւ Նոր Կտակարանի որմնանկարներով ու ծաղկազարդերով: Եկեղեցին հայկական, պարսկական ու եւրոպական ճարտարապետական եւ արուեստի ոճերու գեղեցիկ եւ միաձոյլ կոթող մըն է:

Վանքի շրջափակին մէջ կը գտնուի նաեւ Նոր Ջուղայի Թանգարանը, Ս. Ներսէս Շնորհալի գրադարան-մատենադարանը, գործած է տպարանը 1636-1972 թուականներուն, իսկ 1975 թուականին կառուցուած է Հայոց Ցեղասպանութեան նուիրուած յուշարձանը:

Կէսօրէ ետք, շրջապտոյտին մասնակիցները այցելեցին Իսֆահանի պատմական եւ մշակութային վայրեր:

* * *

Երեքշաբթի, 19 Սեպտեմբերին, շրջապտոյտը շարունակուեցաւ դէպի Եազտ քաղաք, ուր այցելեցին զրադաշտական պատմական վայրեր:

Սեպտեմբեր 20-ին, մասնակիցները մեկնեցան դէպի Թեհրան, ճամբուն վրայ այցելելով Գաշան քաղաքը:

Սեպտեմբեր 21-ի առաւօտեան Թեհրանի օդակայանէն խումբի անդամները գոհունակ սրտով եւ բաւարարուած վերադարձան Գանատա եւ այս ձեւով շրջապտոյտը հասաւ իր աւարտին:

ՀՈՐԻԶՈՆ | www.horizonweekly.ca

# Մեր գրաւականը ժողովուրդն է
# Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի անդամ, Հայ Դատի կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ

– Դուք կը վարէք ՀՅԴ Հայ դատի կեդրոնական խորհուրդի նախագահի պաշտօնը։ Ինչպէս տեղեկացայ՝ նման պատասխանատուութիւն ստանձնած էք սիրայօժար կերպով եւ բաւական ժամանակ կը տրամադրէք այդ գործին։ Ինչո՞ւ վճարովի չէ այդ աշխատանքը։

– Սխալ չհասկցուելու համար տեղեկացնեմ թէ այդ խորհուրդը Հայ դատի կեդրոնական մարմինն է, որ ստեղծուած է ՀՅԴ բիւրոյի կողմէ եւ որուն հիմնական նպատակը Հայ դատի ռազմավարութեան մարտավարական մօտեցումները ճշդելն է։ Նաեւ այս խորհուրդը առիթ կը ստեղծէ որպէսզի աշխարհով մէկ տարածուած Հայ դատի ցանցերու աշխատանքն ու մշակուած քաղաքականութիւնը համադրուի եւ ընդհանրապէս փորձառութեանց փոխանակում կատարուի։ Ինչպէս որ այս օրերուն տեղի ունեցող Եւրոպահայութեան չորրորդ համագումարի ընթացքին ալ արծարծուեցաւ, պետութիւնները կը խօսին Հայաստանի կամ Արցախի մասին, իսկ մենք՝ (իմա՝ Հայ դատի յանձնախումբերը) մեր բնակած երկիրներու անունով է, որ կ՚արծարծենք մեր դատին առնչուող հարցեր, որպէս պահանջատէր քաղաքացիներ, մա՛նաւանդ Սփիւռքի տարածքին։ Հետեւաբար մեր տարած աշխատանքը պաշտօն չի սեպուիր այն իմաստով որ այս դերին մէջ բոլորս ալ կամաւորներ ենք։ Սակայն մեր գրասենեակները ունին պաշտօնէութիւն։ Մենք ունինք կեդրոնական հինգ յանձնախումբեր, որոնցմէ դուք քաջածանօթ էնք անշուշտ Եւրոպայի յանձնախումբին, որ չորս պաշտօնեայ ունի, Հայաստանի գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանը վճարովի պաշտօնեայ է, նոյնն է պարագան Միջին Արեւելքի յանձնախումբին, որու պաշտօնեան դարձեալ վճարովի է՝ յանձին Վերա Եագուպեանի, Մոսկուայի գրասենեակն ալ նոյնպէս պաշտօնէութիւն ունի, իսկ Ուաշինկթընի կեդրոնը վեց հոգինոց աշխատակազմ ունի։ Պէտք է ըսեմ թէ մեր բոլոր աշխատակիցներն ալ արհեստավարժ մօտեցումով եւ օրական 24 ժամ Հայ դատով զբաղող եւ մտածող անձեր են։ Ասոնց կողքին իմ եւ մեր խորհուրդի վարչական անդամները կամաւոր կերպով կը համադրեն գործող այդ ցանցերու աշխատանքը։

– Կրնայի՞ք ներկայացնել Հայ դատի ցանցերու գլխաւոր եւ հիմնական գործունէութիւնը։

– Նախ ըսեմ թէ մենք ունինք գրասենեակ եւ յանձնախումբ։ Գրասենեակին մէջ կը գործէ պաշտօնէութիւնը, իսկ տարբեր երկիրներու մէջ գտնուող յանձնախումբերուն մէջ ներառուած են մեր ընկերներն ու համակիրները, որոնք յառաջ կը մղեն Հայ դատի աշխատանքը։ Աւելի քան 35 երկիրներու մէջ կը գործեն Հայ դատի յանձնախումբեր, իսկ շուրջ 10 երիրներու մէջ ալ՝ գրասենեակներ, որոնցմէ հինգը -ինչպէս ըսիկեդրոնական գրասենեակներ են, որոնք ուղղակի կապուած են Հայ դատի կեդրոնական խորհուրդին, իսկ միւսները՝ անուղղակի կերպով, նկատի ունենալով որ իւրաքանչիւրը իր շրջանի մարմիններու պատասխանատուութեան տակ կը գտնուի։ Եւրոպայի գրասենեակը կ՚աշխատի համաեւրոպական եւ միջազգային կազմակերպութիւններու ծիրին մէջ, Ուաշինկթընի գրասենեակը կը զբաղի ոչ միայն Ամերիկայի քաղաքականութեամբ, այլ նաեւ կը գործէ ընդհանրապէս արեւմտեան աշխարհի կեդրոնական կազմակերպութիւններու շրջանակին մէջ, Միջին Արեւելքի գրասենեակը հակառակ անոր որ Պէյրութ կը գտնուի, լիբանանեան, բայց նաեւ համա-իսլամական եւ համա-արաբական աշխարհի քաղաքական հարցերով կը զբաղի, իսկ Մոսկուայի գրասենեակը ընդհանրապէս Ռուսաստանի, ինչպէս նաեւ ԱՊՀ-ի երկիրներու Հայ դատի աշխատանքները կը վարէ։

– Դուք ըսիք, թէ զանազան երկիրներու միջազգային տարբեր կազմակերպութիւններու հետ կ՚աշխատիք։ Այդ շրջանակին մէջ ինչպէ՞ս կը ներառուի Հայ դատը։

– Վերջին 25-26 տարիներուն մենք կեդրոնացած էինք հայրենի պետականութեան հզօրացման աշխատանքներուն վրայ, որ կ՚ընդգրկէ Հայաստանն ու Արցախը։ Իսկ Հայ դատի օժանդակութեան այս դաշտը բաւական ընդարձակ է։ Առաջին գլխուն տակ կ՚իյնան Հայաստանի հզօրացումը, զայն արտաքին ճնշումներէն հեռու պահելը եւ մեր ապրած երկիրներու մէջ հայրենիքի համար առաւելութիւններ ստեղծելը։ Արցախի պարագային ասոնց վրայ կ՚աւելնան նաեւ ինքնորոշման իրաւունքի եւ անկախութեան ճանաչման ապահովումը։ Երկրորդը՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու հատուցումն է, երրորդը՝ հայապատկան հողերու պահանջատիրութիւնն է, ուր Թաքուն կամ բացայայտ Հայեր կ՚ապրին, ինչպէս Ջաւախահայութիւնը կամ Արեւմտեան Հայաստանի շրջաններուն մէջ ապրող մեր հայրենակիցները։ Չորրորդը երիտասարդութեան եւ ընդհանրապէս հայ համայնքներու քաղաքականացման հարցն է։ Այս առումով որպէսզի խօսքէ գործի անցնինք՝ մշակած ենք յատուկ ծրագրեր։ Օրինակ Ուաշինկթընի մէջ ունինք «ANCA Capital Gateway» ծրագիրը, որուն հիմնական նպատակն է՝ ուսումը աւարտած երիտասարդին համար տեղ ապահովել մայրաքաղաքի միջազգային կազմակերպութիւններու մէջ, ուր յաջողելու պարագային ան կրնայ հոն մնայուն պաշտօնեայ դառնալ, ինչպէս՝ Միջազգային դրամատան կամ նման այլ հաստատութիւններու մէջ։ Ըսեմ, որ երբ կը խօսինք Հայաստանի ի նպաստ քարոզչական աշխատանքներու մասին, ատիկա միա՛յն քաղաքական դաշտին չի վերաբերիր։ Օրինակ մենք Ամերիկայի մէջ ունինք «Us-Armenia double Tax Treaty» ծրագիրը, որ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի միջեւ դաշինքներ ստեղծելու նպատակ կը հետապնդէ, որպէսզի կրկնակի հարկերու հարցը լուծուի։ Այս գործին մէջ բնականաբար դեսպանատունն ալ պատասխանատուութիւն կը ստանձնէ։ Աւելցնեմ, թէ որոշ շրջաններու մէջ մենք նոյնիսկ փոքրաթիւ խումբերով հսկայական աշխատանքներ կրնանք իրագործել, նկատի ունենալով որ անոնց շուրջ ծուարած են քիչ առաջ նշուած յանձնախումբերը, որոնք Հայ դատի կամաւոր բանակը կը կազմեն։ Կրկին Ուաշինկթընի օրինակը բերելով ըսեմ, որ եթէ Ներկայացուցիչներու տան կամ Ծերակոյտի մէջ մեր դատի ի նպաստ որեւէ աշխատանք պիտի տարուի, նախ ընդհանուր ծրագիր մը կը մշակուի եւ կը գործադրուի Ուաշինկթընի մէջ, բայց այդ ուղղութեամբ ամէն մէկ նահանգի մէջ ճնշումներ կը բանեցուին, այս անգամ տեղական յանձնախումբերուն կողմէ, որոնք մեր պատգամը աւելի կը շեշտաւորեն։

– Հայրենի պետութեան հետ ձեր գործակցութիւնը ի՞նչ մակարդակի վրայ կը գտնուի։

– Մենք կը գործակցինք թէ՛ Հայաստանի դեսպանատուներու եւ թէ՛ Արտաքին գործոց նախարարութեան հետ, որուն քաղաքական գիծը մինչեւ 2018 թուականը կը մշակէ նախագահը։ Բայց եթէ ներազգային որոշ հարցեր կամ ծրագրեր կան, այդ պարագային կ՚աշխատինք Սփիւռքի նախարարութեան հետ։

Ըսեմ, նաեւ որ մենք կը կազմակերպենք տարեկան սեմինարներ, ուր արտաքին գործոց նախարարութիւնը կը ներկայացնէ իր առաջնահերթութիւնները, Հայաստանի համար նկատառելի դժուարութիւնները, իսկ մենք ալ՝ մեր գործունէութիւնը։ Այսինքն հոն նախ տեղի կ՚ունենայ տեղեկատուական փոխանակում։ Իսկ ինչ կը վերաբերի համադրումի աշխատանքներուն՝ զանազան հարցերու շուրջ թէ՛ պետութիւնը եւ թէ՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը ստանձնեն իրենց պատասխանատուութեան բաժինը, ինչպէս՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման կամ Հայաստանի հանդէպ թուրք-ազէրական ճնշումները կասեցնելու առնչուող հարցեր։ Իսկ եթէ խնդիր մը կայ որու նկատմամբ նոյն մօտեցումը չունինք, այդ պարագային պարզապէս տեղեկութիւններու փոխանակում կը կատարենք եւ իւրաքանչիւրը իր մեթոտով կ՚աշխատի։

– Ձեր նշած յանձնախումբերու ցանցերը ի՞նչ տարողութիւն ունին եւ որո՞նք կը ներգրաւուին հոն։ Տարիքի սահմանափակում կա՞յ, թէ՝ ոչ։

– Ատիկա կախեալ է անկէ, թէ ո՛ր երկրի մէջ կ՚աշխատինք։ Գանատայի օրինակը բերելով ըսեմ, թէ հոն մենք յանձնախումբեր ունեցած ենք, որոնց անդամները ընդհանրապէս քաղաքական գիտութիւններու ուսանողներ եղած են, կամ ալ այլ ճիւղերու հետեւողներ, որոնք կը հետաքրքրուին քաղաքականութեամբ, բայց յատկապէս Հայ դատով։ Անշուշտ երբեմն շատ լաւ է հին եւ նոր սերունդներու խառնուրդը, որովհետեւ մէկը աշխատանքի փորձառութիւն ունի, իսկ միւսը՝ եռանդ եւ պայքարելու ոգի։ Իսկ այս երկուքի միատեղ ուժերը կ՚ապահովեն շարունակականութիւնը։ Աւելցնեմ, թէ մեր հարիւրաւոր տեղական յանձնախումբերու աշխատանքներուն կը հսկեն շրջանային յանձնախումբերը, որոնք ներկայ են աւելի քան երեսուն երկիրներու մէջ։ Այսինքն տարողութեան առումով երեք մակարդակ գոյութիւն ունի՝ տեղական, շրջանային եւ կեդրոնական։

– Դուք ինչպէ՞ս կը գնահատէք այս աշխատանքները՝ դրական արդիւնքները կամ թերացումներու պարագաները։ Վերջին հաշուով այստեղ դաստիարակչական հարց ալ կայ։ Ինչպէ՞ս կը դաստիարակուին ձեր անդամները։

– Հարցումը շատ հետաքրքրական է։ Բայց նախ արդար ըլլալու համար այս հարցումին թերեւս պէտք է պատասխանեն ուրիշները, որովհետեւ մենք գործին մէջ թաթխուած ենք։ Բայց եւ այնպէս կը տեսնենք թէ՛ դրական արդիւնքները եւ թէ՛ թերութիւնները։ Ըսեմ, թէ այս բոլորին լաւագոյն գրաւականը մեր ժողովուրդն է։ Ան իր նիւթական աջակցութիւններու կամ հանգանակութիւններու ճամբով, ցոյցերուն իր մասնակցութեամբ եւ մա՛նաւանդ գործով ներկայ է եւ կը գնահատէ տարուած աշխատանքը, եւ ատիկա արդէն մեզի գոհունակութիւն կու տայ եւ կ՚անդրադառնանք որ ճի՛շդ ճամբու վրայ կը գտնուինք։ Անկասկած, որ թերութիւններ կան եւ կրնանք աւելին ընել, օրինակ հետաքրքրութիւն արթնցնելու կամ մեր աշխատանքը գրաւիչ դարձնելու առումով։ Մեր մեծագոյն բախտաւորութիւնն այն է որ այսօր Սփիւռքի մէջ իր համահայկական աշխատանքներով Հայ դատը մեր երիտասարդութիւնը ամենէն հետաքրքրող մարզն է, ան ըլլա՛յ դաստիարակչական, կուսակցական, մարզական թէ մշակութային։ Երբ կը մօտենաս երիտասարդի մը, որ հայութեան հետ շատ քիչ առնչութիւն ունի, եւ իրեն հարցում կը յղես՝ կը տեսնես, որ զինք հետաքրքրող մարզը Հայ դատն է։ Բարեբախտաբար վերջին տարիներուն երիտասարդութիւնը զարթօնք կ՚ապրի ու անպայման կ՚ուզէ բան մը ընել եւ ատոր համար ալ կը մօտենայ մեզի եւ երբ կը տեսնէ, որ մենք անաչառ կերպով ու մեծ զոհողութիւններու գնով այս գործին կը տրամադրենք մեր ժամանակն ու ամբողջ էութիւնը, ինք ալ խրախուսուելով աշխատանքի կը լծուի։ Ըսեմ, թէ այս գործին առաջին գրաւականը նուիրումն է, որ բարեբախտաբար մե՛ր սերունդով պիտի չվերջանայ։ Մենք այն վախը ունէինք թէ միջինարեւելեան գաղութներու վերադասաւորումով եւ դասական Սփիւռքի այսպէս կոչուած՝ չիջումով երիտասարդութեան մէջ թափը պիտի պակսի, բայց ընդհակառակն, մենք յաջողեցանք ներազգային իմաստով նոր սերունդին մէջ Հայ դատի նկատմամբ հետաքրքրութիւն ստեղծել։ Ուրախալի է, որ նոյնիսկ ա՛յն սերունդին մէջ, որու ծնողները հեռացած են հայութենէն, կը տեսնենք այդ բոցկլտող կրակը, դէպի հայութիւն վերադառնալու փափաքը։

Հայ դատի աշխատանքներու դրական արդիւնքներէն են՝ Ցեղասպանութեան ճանաչումը բազմաթիւ երկիրներու կողմէ, Ամերիկայի Գոնկրէսին մէջ Հայաստանի օժանդակութեան վաւերացումը եւ ապահովումը, Եւրոպայի մէջ Հայաստանի եւ Արցախի յատկացուած զանազան հիմնադրամներու ներդրումները եւ այլն։ Իսկ թերացումներու կարգին կարելի է նշել մեր արհեստավարժ խումբին փոքրաթիւ ըլլալը, որ կապուած է մեր նիւթական կարողութիւններուն, որովհետեւ պաշտօնէութեան մեծ թիւ ունենալը հսկայական պիւտճէի կը կարօտի։ Առ այդ նիւթական խարիսխներ ստեղծելը եւ մեր ցանցերը աւելի՛ արհեստավարժ դարձնելը ապագայի մարտահրաւէրներն են, մա՛նաւանդ որ մեր դիմացը կեցած թշնամին միլիոններ կը ծախսէ հակաքարոզչական աշխատանքներու համար։

Նոյնպէս թերացում կարելի է նկատել կարգ մը հարցերու պարագային՝ որոշ ընդդիմութիւններու, այլազան խմբաւորումներու կամ այլ փոքրամասնութիւններու հետ աշխատանք տանելու բացակայութիւնը, անշուշտ՝ ժամանակի սղութեան պատճառով։

– Հայ դատով հետաքրքրուող ձեր անդամներու կամ շարքայիններու ո՞ր տոկոսը կու գայ հայկական դպրոցներէ։

– Ուր որ հայկական դպրոցներ կան՝ մեր անդամներու մեծ մասը այնտեղէն կու գայ։ Օրինակ Գանատայի ամէնօրեայ դպրոցները յաճախող երիտասարդութեան 80 տոկոսը կը փարի Հայ դատի աշխատանքներուն։ Իսկ հոն բնակող միջին տարիքի մարդիկ, որոնց երիտասարդութեան տարիներուն հայկական դպրոց չկար, իրենց ընտանեկան դաստիարակութենէն դրդուած եւ Միջին Արեւելքի հայկականութեան ջերմութիւնը պահպանած, մեզի կը մօտենան։ Անշուշտ Գանատայի օրինակը համատարած երեւոյթ մը չէ, ինչ-

• • • ⇒

ԺԻՐԱՅՐ ՉՈԼԱՔԵԱՆ
«Նոր Յառաջ»

# ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
## ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Armenian Prelacy of Canada • Prelature Armenienne du Canada
Գանատայի Հայոց Թեմ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 12
ՆՈՅԵՄԲԵՐ
NOVEMBER/NOVEMBRE
YEAR / ANNÉE 1
NO.12 2017


## ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

## ԶԳՈ՛ՅՇ ԱԳԱՀՈՒԹԵՆԷՆ



ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ՝
Գանատայի Հայոց Թեմի



«Մարդու կեանքը կախուած չէ իր կուտակած հարստութենէն»
(Ղկ 12.15):

Յիսուս այս բառերով կը զգուշացնէ իրեն ունկնդրող բազմութիւնը՝ ամէն տեսակ ագահութենէ:

Օր մը ժողովուրդէն մէկը կը մօտենայ Յիսուսի, խնդրելով որ ան լուծէ ժառանգութեան պատճառով յառաջացած կնճռոտ խնդիրը: Բնականաբար, Յիսուս կը մերժէ անոր խնդրանքը, պարզ այն պատճառով որ Ինքը աշխարհ չէր եկած որպէս դատաւոր նման խնդիրներ լուծելու, Իր թագաւորութիւնը այս աշխարհէն չէր:

Իր խօսքերը աւելի յստակ բացատրելու համար, Յիսուս առակ մը պատմեց, ըսելով որ անմիտ հարուստ մարդ մը արտեր ունէր եւ առատ բերքեր կը ստանար: Ան կը մտածէր այդ բերքերը շտեմարաններու մէջ ամբարել եւ երկար տարիներ հանգիստ կեանք ապրիլ ու վայելել: Սակայն Աստուած անոր կ'ըսէր. «Անմի՛տ, այս գիշեր իսկ հոգիդ պիտի առնեմ քեզմէ. որո՞ւն պիտի մնայ քու պատրաստածդ»:

Յիսուս կ'եզրակացնէ, թէ նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք Աստուծոյ պարգեւած բարիքը կը պահեն իրենց համար, փոխանակ ուրիշներուն բաժին հանելու, նախ՝ կարօտեալներուն, Աստուծոյ առջեւ հարստանալու համար:

Մարդ երբ իր կեանքը վազքի կը վերածէ միայն նիւթական հարստութիւն դիզելու, վստահաբար կը մոռնայ իր Տէրը եւ կը սկսի հարստանալ ու միայն իր անձին ապաւինիլ: Եթէ դիտենք մեր առօրեայ կեանքը, մեր շրջապատը, ներկայ ընկերութիւնը, կը տեսնենք, որ նոյն խնդիրները այսօր եւս գոյութիւն ունին: Յաճախ ականջալուր կ'ըլլանք կամ ականատես՝ ժառանգութեան պատճառով յառաջացած խնդիրներու: Զաւակը ծնողքի դէմ, եղբայրը եղբօր դէմ, եղբայրը քրոջ ու հարազատի դէմ վրէժխնդրութեամբ կը լեցուին եւ ոխերիմ թշնամիներ կը դառնան: Ինչո՞ւ սակայն...

Մարդը որքա՞ն պիտի ապրի այս աշխարհի մէջ եւ ի՞նչ պէտք է տանի իր հետ մահէն ետք: Մերկ կու գանք աշխարհ եւ մերկ կ'երթանք այս աշխարհէն: Ինչո՞ւ վտանգենք յաւիտենական գանձերու ժառանգութիւնը, ժամանակաւոր գանձեր դիզելով:

Հետեւաբար, եկէ՛ք միայն Աստուծոյ ապաւինինք: Մեզի տրուած աստուածային բարիքներէն բաժին հանենք նաեւ մեր նմանին՝ ուրիշին: Այնպէս ապրինք, որ երկնային ու յաւիտենական գանձեր դիզենք՝ Աստուծո՛յ առջեւ հարստանալու համար:

ԶԳՈ՛ՅՇ ԱԳԱՀՈՒԹԵՆԷՆ... ՔԻՉՈ՛Վ ԳՈՀԱՆԱՆՔ:



## Դասեր՝ ճշմարիտ քրիստոնէական կեանք ապրելու համար

Փափկութիւնը անբուժելի, կրկնակի ցաւ է, մինչ նեղութիւնը կրկնակի առողջութիւն կը պատճառէ հոգիին եւ մարմինին: Անոր համար է, որ մեր նախնիքները մի՛շտ նեղութեամբ կ'ապրէին եւ չէին դժգոհեր, որովհետեւ Աստուծոյ կը ծառայէին: Երբե՛ք չէին ըսեր. «Ինչո՞ւ համար երբ Աստուծոյ կը ծառայենք, Ան մեզի չ'օգներ». ընդհակառակը՝ աւելի կը զօրեպնդուէին Աստուծոյ սիրոյն մէջ: Անոնք նախ կը հաւատային, թէ Աստուծոյ խոստումները սուտ չեն. արդարեւ որեւէ մէկը երբ ուզէ ուրիշը խաբել, նախ տառապանք չի տար անոր եւ ապա՝ ուրախութիւն, այլ նախ ուրախացնող բաներով կ'առաջնորդէ եւ ապա՝ տառապանքով լեցուն բաժինը:

Բարսեղ Մաշկեւորցի

## ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ



Ո՛վ մեր քահանայապետը՝ Յիսուս, երկարէ՛ փրկական
խաչդ՝ այս աշխարհի ծովուն մէջ լողացողներուս,
մեզ վեր՝ դէպի քեզ բարձրացնելու համար: Շնորհիքի՛
կարօտ ենք, սփռէ՛. յոգնած ենք մեղանչելէ, քաւէ՛.
խաւարի մէջ կը խարխափինք, ճառագայթէ՛. մեր
հաւատքէն տապալած ենք, հաստատէ՛:
Դո՛ւն ես յոյսը, դո՛ւն ես լոյսը, դո՛ւն ես կեանքը,
դո՛ւն ես քաւութիւնը, դուն ի՛նքդ ես անմահութիւնը:
Նայէ՛ բոլորիս, սփոփէ՛ մեր տարակուսանքները
քու փրկագործութեամբդ, հանդարտեցո՛ւր
մեր խռովութիւնները քու խաղաղութեամբդ,
հանգստացո՛ւր մեր յոգնած հոգիները քու
օթեւաններուդ մէջ, ուր դուն գացիր, ո՛վ Տէր, եւ նոյնը
մեզի խոստացար, յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

# ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

«Սուրբ հոգին պիտի սորվեցնէ ձեզի այն ժամանակ, որ ինչ պէտք է ըսէք եւ կամ խօսիք»:

Ղուկասի Աւետարանին մէջ յիշուած շատ զօրեղ եւ տպաւորիչ նախադասութիւն մըն է Յիսուսի կողմէ յիշուած այս հաստատումը: Ամբողջ քրիստոնէական պատմութեան մէջ բայց մանաւանդ սկսելով Հին Կտակարանէն կը տեսնենք, որ Սուրբ Հոգին կատարեալ ներկայութիւն եղած է եւ մղիչ ուժ՝ տարածելու Աստուծոյ փառքը, կատարելու անոր ծրագիրները եւ ամրապնդելու մարդոց երբեմնի թերահաւատ ու յուսահատ սրտերը:

Եկեղեցին Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ անոր հիման վրայ հաստատուած է: Պենտեկոստէին օրը (Պենտէ կը նշանակէ յիսուն, իսկ Ghost՝ հոգի)՝ Յիսուսի համբարձումէն յիսուն օր ետք, Յիսուս խոստացած էր ղրկել Սուրբ Հոգին: Ղուկասի այս համարը կը նշէ, որ Սուրբ Հոգին կը սորվեցնէ, թէ ի՛նչ պիտի խօսիք: Եւ իսկապէս իւրաքանչիւրը անոնցմէ լեզու զգեցաւ:

Սուրբ Հոգին ընդհանրապէս ներգործիչ է:

Աստուած տեսաւ, ըսաւ եւ ըրաւ: Աստուածութիւնը իր մէջ ունի երրորդութիւն: Հայրը, որ տեսաւ, Որդին, որ խօսեցաւ եւ Հոգին, որ գործեց: Ահա այս երեքը կը կոչուին Աստուածութիւն:

Այսօր շատեր չեն հաւատար հոգիի զօրութեան, որովհետեւ չեն տեսներ, աներեւելի է հոգին: Սակայն հոգին, եթէ երեւելի ըլլար, հոգի ըլլալէ կը դադրէր: Հոգին խորհուրդն է մարդուն կեանքին, անոր առած շունչին ու ներշնչումներուն, ապրումներուն, հոգեմտաւոր ներաշխարհին: Սուրբ Հոգին ինքզինք միշտ չի յայտներ: Այլ կ'ապրուի:

Վարդան Վրդ. Թաշճեան

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

### Որոշ բաներ յիշել Գոհաբանութեան տօնին առթիւ

Շատ բաներ ըսուած են մոռնալու դրական կողմերուն մասին: Մոռնալ անցեալի քէնոտութիւնները, նախապաշարումները, անախորժ փորձառութիւնները եւ սրտացաւերը:

Նաեւ պէտք է չմոռնանք յիշելուն օրհնութիւնները:

Գոհաբանութեան տօնին պէտք է՝

Յիշենք մեր մեղքերը, որպէսզի խոստովանինք Աստուծոյ:

Յիշենք մեր տկարութիւնները, որպէսզի զօրութիւն ստանանք:

Յիշենք մեր մարդեղութիւնը, որ դադրինք փորձել Աստուած ըլլալէ:

Յիշենք Աստուծոյ ողորմութիւնը, որ ուրիշներուն հանդէպ ողորմած ըլլանք:

Յիշենք մեր ուրախութիւնները, որ բերկրալի դառնանք:

Յիշենք Աստուծոյ մեծութիւնը, որ խոնարհ ըլլանք:

Յիշենք մեր աղքատութիւնը, որ ուրիշներուն օգնենք:

Յիշենք մեր կարիքները, որ ուրիշներուն կարեկից ըլլանք:

Գոհաբանութեան գաղտնիքը գոհունակ ապրիլն է:

Գոհութեան պակասը ապերախտութեան ախտն է:

